64. ԹԱՔԱՎՈՐԻ ԽԱՐՍ

Թաքավորիմ իրեք խատ տղա կէղնի։ Էտ ժամանակին ախչիկ ուլել չկա, նետ ու անեղ կթալեն, որտեղ ընգավ՝ ախչիկ էն տեղեն կպերեն։

Ճեռչ տղեն նետ ու անեղ թալեց, քնաց մուֆթու տանիսն ընղավ։ Առավ մուֆթու ախչիկ, ուր նետ ու անեղն էլ խետ էկավ։

Տառնանք միճնեկ տղի վրա։ Միճնեկ տղեն նետ ու անեղ ձքեց, քնաց ընգավ կաղու տանիս։ Վերցնեց կաղու ախչիկ ու նետ ու անեղ՝ էկավ։ Էրկուսն էլ կարքվան։

Պստիկ տղեն հ՝ելավ տանիս, նետ ու անեղ թողեց, քնաց պըտոտվավ օր ուր նետ ու անեղ քտնի։ Աշկեց նետ ու անեղ էրկու քարի մեջ ընգած էր։ Վերցնեց նետ ու անեղ, տեսավ ախչիկ մի ընգավ ետև էկավ։ Ախչիկն ա կտրուտած շորերով, խին, էկավ տղի խետ, մտավ տուն։

Տղեն ըսավ.— Ախչի՛կ, քեղիկ իմ քլխուն բալա պերեցի։ Ես կաշկեմ իմ ախպեր մուֆթու փեսա յա, մեկ ախպեր կաղու փեսա յա։ Ես էլ վիր փեսա եմ, կաշկեմ մե խեղճու փեսա էղա։

Թաքավոր օր մը լա ըսավ.— Տղեյներ, դուք կարքըվեր եք, պետք ա գաք ընծի տեսնիք։

Հիմի մեկ մուֆթու փեսա յա, մեկ կաղու փեսա յա, կանան օր՝ խարիր օսկու տեղ էրկու խարիր օսկի խըռչեն։ Պստիկ տղեն ֆուկարա, խղճու փեսա, չի կանա օր մե ղուրուշի պան առնել։

Էկեր տղեն տուն, ծեռ տրեր էրեսին՝ կմտածա։

Կնիկն աշկեց օր իրիկ ծեռ տրեր էրեսին՝ կմտածա։

Ըսավ.— Ընչի՞ կմտածես։

— Ախչի, քաշվիր իմ աչիչ հ'առաճեն, եռացիր։

Կնիկն էլ գ'ի, գ'ի, գ'ի, գ'ի, էրավ իրկան բանուս էրաց։

Կնիկ տարցավ ըսավ.— Մարթ, ի՞նչ ա էղեր։

Ըսավ.— Կնի՛կ, քու հեր անիծած, ես կաշկեմ էրկու ախպերս, մեկ մուֆթու փեսա յա, մեկ կազու, էնոնք կարող են խինդ օսկու տեղ խարիր օսկի ուտեն, ես էլ կաշկեմ, օր չեմ կանա մե ղուրուշ ուտել։

Կնիկն ըսավ.— Պառկիր քնիր մինչև խըլըսուն դեմ, աստված օղորմած ա։

Պառկան քնան։

Խըլըսվան դեմ կնիկ զիրիկ կանչեց, ըսաց.—Մարթ, հ'ելիր քնա էն տեն օր ես քու հ'ետևեն ընգա ու էկա։ Ասա. «Ֆաթմա խանում, Ֆաթմա խանում, Աշա խանում խաս բաղչից մեկ ճութ խաղող կուղա»։

Մարթն հ'ելավ քնաց էրկու քարի մարեն, ըսավ.—Ֆաթմա խանում, Ֆաթմա խանում, Աշա խանում մեկ ճութ խաղող կուղա խասբաղչից։

Ֆաթմա խանում պերեց էդ մարթուն մեկ ճութ խաղող տվեց։

Տղեն առավ խաղող, ընգավ ճամբախ։ Մե քիչ ճամբախ էկավ, ըսավ՝ «Ջանըմ, իմ կնգան խեր անիծած, էս մեկ ճութ խաղողի քյարամաթ[1] ի՞նչ կէղնի»։ Նստավ էն դեղ, արթուխ, մեկ սահաթ էտ խաղող կերավ։ Կուտա, չուտա, խաղող գենա էն տեղն ա, չի պակսիր։

Էկավ, էկավ տուն, ըսավ. «Վալլահ, իմ կնգան քյարամաթ շատ ա»։

Մնացին[2] առավոտման դեմ, էրկու ախպեր կնացած խոր մոտ տեսութեն, հիմա պետք ա, օր ինքն էրթա։

Կնիկ ասաց.— Մ՛ըթ, օր կէրթաս, քու խեր կտեսնիս, պըտի քու խերն ասա՝ «Պստիկ տղա, արի տեսնինք ընձի ի՞նչ ես ընձա պերեր», տուն էլ ըսե՝ «էս մեկ ճութ խաղողն եմ պերեր»։

Տղեն քնաց խոր տեսութեն։ Խեր ըսաց.— Կտրիճ, արիվուտ մեռնիմ, արի տեսինք ընձի ինչ ես ընձա պերեր։

Տղեն ըսավ.— Թաքավոր ապրած, էս մեկ ճութ խաղողն եմ պերեր, առ քեզի։

---

1 Շնորհքը, ուժը (Ս. Բ.)։

2 Բնագրում՝ մնացինք (Ս. Կ.)։

Պերին սեղան պատրաստեցին, էրաղներու շուշեք արեցին սեղանի վերեն պըտի էրաղ խմեն։ Էն ճութ խաղողն էլ տրեցին սեղնի վրա, մաղա պըտի էնեն։ Ըղ խաղող կուտին, չուտին չի խըլըսիր։

Թաքավոր ըսաց.— Իմ պստիկ տղին կուրրան էղնիմ, ամենից լավ ընձա յա պերեր ընձի, մե ճութ խաղող, կուտենք, չուտենք՝ չի խըլըսիր։

Խեր ըսաց.— Տյուք իրեք տղա եք ընձի,— ճոչ տղին ըսաց.— քեզանից կուզեմ ժամ մի։—Տառցավ միճնեկ տղին ըսավ.—Քեզանից էլ կուզեմ կարմունջ մի սուկես էն ժամու հ'առաճ։—Տառցավ պստիկ տղին ըսաց.—Պստիկ տղա՛, քեզանից էլ կուզեմ մեկ պաղնիս սուկես կարմնջի գլոխ, օր պաղնսից հ'ելնիմ, կարմնջից հ'ընցնիմ, էրթամ ժամ։ Մեկ գիշերվան մեջ պատրաստ կայնըցուցեք։

Պստիկ տղեն հ'ելավ էկավ տուն։ Էն էրկու տղեն հարուստ ին։ Մուֆթու փեսեն քնաց էրկու հազար մարթ պռնեց ուր ժամ սուկեց, կազու փեսեն էլ քնաց, հինգ հազար հոքի պռնեց տվեց կարմունջ սուկել։

Կարմունջն ու ժամ թող էն տեխ սուկեն։

Պստիկ տղեն կնացե, ծեռ էրեսին տրե, կմտածի։

Կնիկն ըսաց.— Հա՜յ, մա՛րթ, ի՞նչ կմտածես։

Ըսավ.— Դե, եռացիր քնա, քու հեր անիծած։ Ես կաչկեմ, իմ մեկ ախպեր մուֆթու փեսա յա, մեկ ախպեր կազու փեսա յա, էնոնք ժամն ու կարմունջ կանան սուկեն, քանի օր հարուստի փեսա են։

Կնիկն ըսավ.— Պառկիր քնիր, աստված օղորմած է։

Հ'իրիկուն էղավ, մութ տվեց, ըսավ.— Մարթ, հ'ելիր քընա Ֆաթմա խանումին ասա՝ «Ֆաթմա-խանում, Ֆաթմա-խանում, Աշա խանըմ էն պաղնիս կուզա քաղաքի կարմնջի գլոխ տրվիր»։

Տղեն քնաց ըսավ, թողեց էկավ, պառկավ։ Կես գիշերին աշկեց օր բոռոց մի կուքա։

Կնիկն ասաց.— Մարթ, հ'արթի, տես պաղնիս կբերեն։

Մարթ հ'արթավ, հ'ելավ փանշարեն, աչկեց օր քառասուն հոքով բոռալեն, ճչալեն բաղնիսն պերեցին կարմնջի գլոխ գրին։

Խըլըսուն պարի լուս պացվավ հազըրներու վրա։ Թաքավորն ա հ'արթավ, հ'ելավ աչկեց օր կարմունշն ալ, ժամն ալ, պաղնիքն ալ սուկած ի։

Թաքավորն ա, կնաց պաղնիս, լոխկըցավ, հ'ելավ շորեր խաքավ, կընաց կարմունշն անցավ, կնաց ժամ։

Էն տեղ ուր աստված կկանչա, իրեք տղին տուղա կէնա, էնկից վերջ կէրթա նստի ուր սարեն։

Թաքավորի կնիկ կու կանչա տղեկներուն, կըսե.— Տուք իրեքդ ի կարքվաք։ Պետք ա ծեր կնգրտիք քան ընձի տեսնին։

Մեկ մուֆթու ախչիկ, մեկ կազու ախչիկ կարող են մեկ բեսլամու տեղ քսան խատ բեսլամա բռնել։ Պստիկ տղեն արի մտածա. տեսնանք կնիկն ինպե՞ս ճամխա մոր տեսութեն, կնդան շորերու վերեն հազար կարկտան կա։ Ինքն իրեն նստավ մտածեց։

Կնիկն ըսավ.— Մարթ, ի՞նչ ա, ծեռտ ի տրեր ես իրիսիտ, կմըտածես։

— Տառցի՛ր, քընա կոյսըվիր իմ աչիչ հ՚առճևեն։

Կնիկ տղին էրաց գ՚ը, դ՚ը, գ՚ը, ղ՚ը բանուս էրաց։

Կնիկ ըսավ.— Մա՛րթ, ի՞նչ ա էղի, ընձի ասա։

Մարթն ըսաց.— Կնի՛կ, կաչկեմ, իմ ախպերներ՝ մեկ կազու փեսա յա, մեկ մուֆթու փեսա յա։ Էնոնք խինդ օսկու տեղ խարիր օսկի կխառչին։ Ես չեմ կանար էնոնց պես նստիր, կանիր։ Ես կաչկեմ քեղիկ հազար կարկտան կա քեզի վրա, ես ինչպե՞ս քեղի ճամխեմ իմ մոր մոտ։ Կնի՛կ, իմ դարդն էլ էս ա։

Կնիկ ըսավ.— Մա՛րթ, աստված օղարմած ա, պառկիր, մինչև առավոտման զեմ, ես քեզի կասեմ։

Առավոտվան պարի լուս պացվավ, կնիկն ըսաց.— Մա՛րթ, հ՚ելիր կնա Ֆաթմա խանումին ասա՝ «Ֆաթմա խանում, Ֆաթմա խանում, Աշա խանում եռսունեվին բեսլամա՝ մեկմ՚ էլ ս թոփալ՝ քառասուն ծեռքմ՚ էլա շոր թոփլի խետ թոխ տուն էղնին»։

Զուր էդ կնդան իրիկ տառցավ, տեսավ օր քառսուն բեսլամեն տան մեջ։

Կնիկ ուր խին շորեր խանեց, խագավ էդ թամիզ շորեր, քառասուն մեկ չեշիտ են թալած յազմա, կնիկ մեկ տեսակ է թալած։

Կնիկ ուր իրկան թամբեխ էրաց.— Մարթ, ես կէրթամ քու մոր մոտ տեսության, չէղնի օր իմ խին շորեր վառես։

Կնիկ թոխ էրթա քառսուն բեսլամով մոր տեսութեն, իրիկ թոխ պերա թունիր վառա, պերա կնգան խին շորեր լըցա թունդրան մեջ վառա։

Մնացին մինչև հ՚իրկուն, կնիկն քառսուն բեսլամով էկավ ուրանց տուն։

Ըսավ.— Մա՛րթ, չէղնի՞ իմ շորեր վառեր ես։

Էկավ աչկեց օր շորեր վառած ի։

Ըսաց.— Մարթ, ես թամբեխ չէրի՞, օր իմ շորեր չվառես։ Գո՛, ես կնացի։ Էրկրթե սոլ խաքնիս՝ կըտրտի, պողպատե գավազան

պոնես ծեռտ ի մաշի։ Մորուքդ սիվտկի, իշնի չուր պոռտանտի, հարիր տասն ու խինդ տարեկան էղնիս, նոր զիս գտնիս։

Կնիկ կընաց։ Բեսլամեքն էլ հետ։

Մարթ էրթըլով խըղճըցավ, ըխթիյարցավ, մորուսն իշավ պոռտի վրա, մարթ հարիր տասնուխինդ տարեկան էղավ, ընդեր քաղքե-քաղաք, էրկրե-էրկիր, ման քուքա, բալքի ղկնիկ գտնի։

Շոք ժամանակն ա, մեկ քաղաքիմ պատահավ, տեսավ օր մեկ ախպուր կա էդ քաղաքի մեջ։ Էլ տու մ'ըսեր քի, ուր կնդան տներ ախպրի մոտիկ ա։

Էդ խալիվոր էկավ էդ ախպուր չուր մի խմեց, էդ տեղ քարե սուկված պատ կա, օր մարթ նստի։ Խալիվորն հ'ելավ էդ պատի վրա պառկավ՝ օր քնի, տեսավ օր ճանչեր թափեր էտոր քիթ մոթին, աչկերուն։ Ուր կնդան բեսլամեն կուգա ճրի։ Կաչկե օր մեկ խալիվոր մի էդ տեղ ընդած ա, ճանչեր թափած քիթ մոթին։ Էրկըթե սոլ խաքած կտրտած է, պողպատե բաստոն պռնած ծեռ, մաշեր է։ Մորուքն իշած պոռտան վրա, սըվտըկած։ Ախչիկ ռահմ էրաց ու խղճաց։ Կանավ կես սահաթ էտոր ճանչեր քշեց։ Կես սըհաթեն սորա թողեց գնաց։

Խանում ասաց.— Ախչի, սևավոր, ո՞ր տեղն իր ղու, էս կես սըհաթ հ'անգըցեր ես։

Ախչիկն ըսաց.— Խանում, քեզնե պախեմ, աստծուց ի՞նչ պախեմ, ես քնացի ախպուր՝ տեսա օր էրկըթե սոլ խաքած ու մաշած, պողպատե գավազան ծեռ բռնած, գավազան էլա մաշած, մե խալիվոր, մորուա իշած պոռտան վրա, էն տեխ քնացած էր, ճանչեր վրան թափած ին, ես ալ կայնա, ճանչեր քըշեցի, էնդյուց հ'անգըցա, խանըմ։

Խանըմն էլ ասաց.— Ախչի՛կ, քնա կանիր էն տեխ, ճանչեր քըշա, չուր էն խալիվորն հ'արթնի։ Եփ օր հ'արթավ, պեր էստեղ։

Ախչիկ խանումի խոսքն էրաց։ Կնաց կանավ, խալիվորի ճանչեր քըշեց։ Մեկ էրկու սըհաթ անցավ, խալիվոր քընաց հ'արթավ։ Էդ ախչիկ պռնեց խալիվորի ծեռք, տարավ ուրանց տուն, խանըմի մոտ։

Ուր կնիկն ըսաց.— Պարո՛վ, ըխթիյար ջան։

Էն էլ պարով տվեց էնոր։

Կնիկն ըսաց.— Խալիվո՛ր, մտքիդ է կուքա՞ իմ ջորեր հ'ընչի՞ վառեցիր։

Եփ օր էդպես ասաց՝ խալիվորն իմացավ, օր էսի ուր կնիկն ա։

Կնիկ առավ ըղխալիվորն անմահական ճրով վլաց։ Անմահական ճուր խմցուց, նոր խալիվոր տառցավ տասնուխինգ տարեկան։

Էնոնք խասան ուրանց[1] մուրազին, տուք էլ խասնիք ծեր մուրազին։

Աստծուց իջավ իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ ջաղամաթին։

---

1 Բնագրում՝ էնոնց (Ս. Կ.)։